Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղարի
2024 թվականի օգոստոսի 12-ի
N ԳՔՀ /528 - Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության (այսուհետ՝ Վարչության) գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ 93-30.1-Մ2-7)

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության գլխավոր մասնագետը անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության գլխավոր ճարտարագետ-շինարարը կամ Վարչության գլխավոր ինժեներներից մեկը կամ Վարչության ավագ մասնագետը կամ Վարչության պետը:

1.4. Աշխատավայրը

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, քաղաք Արմավիր, Աբովյան 71:

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. իր իրավասության սահմաններում իրականացնում է բնակարանային և այլ շինարարության, կապիտալ շինարարության և կապիտալ վերանորոգման պատվիրատուի գործառույթներ.
2. մասնակցում է քաղաքաշինական գործունեության վերահսկողության իրականացման աշխատանքներին.
3. իրականացնում է ապօրինի շինարարության կանխման, կասեցման և վերացման

ուղղությամբ տարվող աշխատանքներ.

4. հաստատված քաղաքաշինական ծրագրերին համապատասխան մասնակցում է քաղաքաշինական գործունեության օբյեկտների ընտրության աշխատանքներին, որոշում ներդրումների չափը, պայմանագրային հիմունքներով ներգրավում օբյեկտի քաղաքաշինական փաստաթղթեր մշակողներին և շինարարություն իրականացնողներին.
5. մասնակցում է կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ՝ հասցվելիք վնասների փոխհատուցման վերաբերյալ, մինչ շինարարություն սկսելը, ինչպես նաև շինարարության ընթացքում համաձայնության ձեռք բերման աշխատանքներին.
6. իրականացնում է տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների գործունեության վերահսկողություն քաղաքաշինության և ենթակառուցվածքների կառավարման բնագավառում.
7. իրականացնում է կառուցապատման նախագծի ճարտարապետահատակագծային առաջադրանքի համաձայնեցման գործընթացը՝ հաստատված քաղաքաշինական փաստաթղթերի բացակայության դեպքում.
8. իրականացնում է ստուգումների անցկացում, ըստ անհրաժեշտության, տեղական ինքնակառավարման մարմիններում համապատասխան համայնքի վարչական տարածքում ինքնակամ և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին չհամապատասխանող շինարարության դեպքեր հայտնաբերելիս, ենթակառուցվածքների կառավարման բնագավառում, ինչպես նաև քաղաքացիների դիմում-բողոքների հիման վրա.
9. իրականացնում է մշտադիտարկում մարզի տարածքում քաղաքաշինության և ենթակառուցվածքների կառավարման ոլորտում տիրող իրավիճակի վերաբերյալ.
10. հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բացակայության դեպքերում իրականացնում է քաղաքաշինական գործունեության նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների կողմից ներկայացված հողհատկացումների առաջարկությունների համաձայնեցումը, և օրենսդրությամբ նախատեսված դեպքերում առաջարկությունների վերաբերյալ եզրակացություններ է ներկայացնում Վարչության պետին՝ պետական կառավարման համապատասխան լիազոր մարմիններին ներկայացնելու համար.
11. իրականացնում է հսկողություն համայնքային ենթակայության ջրմուղ-կոյուղու, ջրերի մաքրման, բնականոն ջրամատակարարման և ջրահեռացման, բնակավայրերի կանաչապատման, մաքրման և աղբի ու թափոնների վերամշակման աշխատանքների նկատմամբ.
12. իրականացնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին, Մարզպետի պատվիրատվությամբ իրականացված աշխատանքների ավարտական, հանձնման-ընդունման գործընթացին առնչվող փաստաթղթերի (ակտերի) նախապատրաստման աշխատանքները.
13. իրականացնում է մարզի բնակավայրերի պատմամշակութային հիմնավորման, հուշարձանների պահպանական գոտիների նախագծեր կազմելու աշխատանքները.
14. իրականացնում է թույլտվության տրամադրում տեղական նշանակության

հուշարձանների փոփոխման համար՝ լիազոր մարմնի եզրակացության հիման վրա.

15. իրականացնում է տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկության համաձայնեցում կամ հիմնավորված մերժում առանց հողի կատեգորիայի փոփոխության քաղաքաշինական նպատակով առանձին հողամասի գործառական նշանակության փոփոխության վերաբերյալ.
16. իրականացնում է Հայաստանի Հանրապետության կարիքները բավարարելու համար նախատեսված և պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորվող կապալային շինարարական, նախագծային ու հետազոտական աշխատանքների իրականացման պետական պայմանագրերի կատարումը.
17. իրականացնում է վերահսկողություն մարզի ուսումնական հաստատությունների, ինչպես նաև մարզային ենթակայության առողջապահական հաստատությունների շենքերի կառուցման, վերանորոգման, պահպանման և շահագործման աշխատանքները:

Իրավունքները՝

1. ստուգել Մարզի քաղաքաշինական գործունեությունը.
2. կանխել, կասեցնել և վերացնել ապօրինի շինարարությունը.
3. տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին ներկայացնել հայտեր՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքի, ինչպես նաև ինժեներական ենթակառուցվածքներին միանալու տեխնիկական պայմաններ ստանալու համար.
4. ստուգել կապալառու կազմակերպության տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունների կողմից ներկայացված աշխատանքների ծավալները
5. ուսումնասիրել բացահայտված ապօրինի շինարարության կանխման, կասեցման և հետևանքների վերացման գործընթացի հիմքերը.
6. տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և Աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների հետ համատեղ քննարկել՝ քաղաքաշինության և ենթակառուցվածքների կառավարման ոլորտում առկա հիմնախնդիրները.
7. հավաքագրել համապատասխան տեղեկատվություն տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներից՝ Մարզում քաղաքաշինական կադաստրի վարման գործընթացը կազմակերպելու նպատակով.
8. տեղական ինքնակառավարման մարմիններից պահանջել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթային հիմքեր՝ քաղաքաշինության և ենթակառուցվածքների կառավարման բնագավառում նրանց գործունեության նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության իրականացման նպատակով.
9. ստանալ տեղեկատվություն տվյալ բյուջետային տարվա ընթացքում իրականացված շինարարական աշխատանքների վերաբերյալ, հրավերներ ներկայացնել նախաորակավորման փուլին մասնակցելու համար.
10. ներգրավվել արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության մարզային միջոցառումներին.

11. Վարչության առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված, ինչպես նաև Գլխավոր քարտուղարի գիտությամբ, հրավիրել խորհրդակցություններ՝ դրանց մասնակից դարձնելով համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների, փորձագետների.
12. մասնակցել աշխատանքային քննարկումների և խորհրդակցությունների.
13. այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանալ Վարչության առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր:

Պարտականությունները՝

1. համայնքներում ինքնակամ և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին չհամապատասխանող շինարարության դեպքեր հայտնաբերելիս դիմել համապատասխան իրավասու մարմնին և տեղեկացնել պետական լիազոր մարմնին՝ ապօրինի շինարարության կանխման, կասեցման և հետևանքների վերացման առաջարկությամբ.
2. հաստատված քաղաքաշինական ծրագրերին համապատասխան ընտրել քաղաքաշինական գործունեության օբյեկտներ, որոշել ներդրումների չափը, պայմանագրային հիմունքներով ներգրավել օբյեկտի քաղաքաշինական փաստաթղթեր մշակողներին և շինարարություն իրականացնողներին.
3. իրականացնել ընտրության գործընթաց՝ օբյեկտների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման, կապալառու կազմակերպությունների, շինարարության հեղինակային ու տեխնիկական հսկողության աշխատանքների իրականացման համար.
4. համապատասխան լիազոր մարմիններին ներկայացնելու նպատակով՝ Մարզի քաղաքաշինության ոլորտի և բյուջետային բյուջետային ծախսերի միջնաժամկետ ծախսային ծրագրերի հայտերը ներկայացնել Վարչության պետին.
5. իրականացնել մշտադիտարկման աշխատանքներ Մարզի տարածքում ֆինանսական տարբեր միջոցներով կապիտալ շինարարություն և հիմնանորոգում իրականացնող պատվիրատու կազմակերպությունների գործունեության նկատմամբ.
6. ինժեներական սպասարկում իրականացնող ծառայություններից ստանալ օբյեկտների ինժեներական ենթակառուցվածքների նախագծման, կառուցման և շահագործման տեխնիկական պայմանների ապահովման աշխատանքները, ինչպես նաև փսխհատուցել կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտներին հասցվելիք վնասները.
7. իրականացնել մշտադիտարկում Մարզի քաղաքաշինական գործունեության, Մարզում սուբվենցիոն ծրագրերով քաղաքաշինության ոլորտին առնչվող իրավիճակի նկատմամբ.
8. համաձայնեցնել առանց հողի կատեգորիայի փոփոխության՝ քաղաքաշինական

նպատակով առանձին հողամասի գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը.

9. լիազորված մարմնի եզրակացության հիման վրա տրամադրել տեղական նշանակության հուշարձանների փոփոխման թույլտվություն.
10. տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներից ստանալ Մարզի տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանման փաստաթղթային փաթեթը՝ համապատասխան եզրակացությամբ, ներկայացնել վերադաս մարմինների համաձայնեցմանը.
11. ամփոփել արտակարգ իրավիճակների հետևանքով բնակչությանը պատճառված վնասների գնահատման, աղետների կանխման, վտանգի նվազեցման և հետևանքների վերացման ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը և ներկայացնել Վարչության պետին.
12. նախապատրաստել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ փաստաթղթեր քաղաքաշինության ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ.
13. մշակել համապատասխան ոլորտի ռազմավարական ծրագրերի, հայեցակարգերի, օրենքների և իրավական այլ ակտերի նախագծեր.
14. իրականացնել մոնիթորինգ համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում կառուցապատման, կառուցապատողներին ճարտարապետահատակագծային առաջադրանքների, շինարարության (քանդման) թույլտվությունների, ինքնակամ կառուցված օբյեկտների օրինականացման կամ մերժման որոշումների կայացման, քաղաքաշինական գործունեության բնագավառում.
15. իրականացնել համայնքների վարչական սահմաններից դուրս տարածքներում կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքները, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, կանխարգելում, կասեցնել ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովել դրանց հետևանքների վերացումը.
16. իրականացնել Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստումը, ինչպես նաև մշակել դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցներ. ուսումնասիրել հիմքերը, նյութերը, ստուգել տրամադրված լրացուցիչ փաստաթղթերը, մոնիթորինգի արդյունքները, տրամադրել մասնագիտական եզրակացություն.
17. կազմել պատմամշակութային հուշարձանների պահպանման գոտիների նախագծեր, պատմամշակութային հուշարձանների հաշվառում, մասնակցել աշխատանքային քննարկումներին:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթությունը, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն:

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3.Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը.

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ քաղաքաշինության կամ արդյունաբերության կամ ճարտարագիտության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4.Անհրաժեշտ կոմպետենցիաներ
Ընդհանրական կոմպետենցիաներ

1. Ծրագրի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ

1. Բանակցությունների վարում
2. Կոնֆլիկտների կառավարում
3. Բողոքների բավարարում
4. Ժամանակի կառավարում
5. Փաստաթղթերի նախապատրաստում:

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և դիմումների քննարկման արդյունքում որոշումների նախապատրաստման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում

որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության գերատեսչական և տարածքային ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: